ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 373

17 սեպտեմբերի 2021 թվականի N -Ա

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՆՁՆՎԱԾ ՇԵՆՔԸ ՆՈՒՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 43 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության տնօրենի 2019 թվականի հոկտեմբերի 9-ի դիմումը՝

որոշում եմ.

1. Սյունիքի մարզի Կապան համայնքի Արծվանիկ բնակավայրում գտնվող, «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերությանն անհատույց հանձնված շենքն ու շինությունները իրենց սպասարկման 1.566 հա հողամասով հանել նույն ընկերության հաշվեկշռից և հաշվառել Սյունիքի մարզպետարանի հաշվեկշռում:

2. Նշված աշխատանքներն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնման-ընդունման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Արմեն Թադևոսյան	-	Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Մուշեղ Կոստանդյան	-	Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ
Մարի Համբարձումյան	-	Սյունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության Ֆինանսատնտեսագիտական բաժնի ավագ մասնագետ
Արարատ Վարդանյան	-	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության տնօրեն
Անահիտ Ալավերդյան	-	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲ ընկերության հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ հնարավոր սեղմ ժամկետում իրականացնել հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել տեղեկատվություն:

3. Մարզպետարանի իրավաբանական բաժնի պետին՝ հանձնման-ընդունման աշխատանքներից հետո Կադաստրի կոմիտեում իրականացնել սույն որոշումից բխող գործառույթներ:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Սյունիքի մարզպետի 1999 թվականի օգոստոսի 24-ի N 43 որոշումը:

17.09.2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Մ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021թ. սեպտեմբերի 17
ք. Կապան